

## ՃԱՊՈՆ ԾԱՌԱՆԵՐԸ

Ճապոնացիք շատ տարօրինակ հայեացք ունին ծառայի մասին. ծառայի պարտականութիւնը ոչ միայն անարգական, այլ և, պատուաբեր է համարոււմ, այն ինչ կառապանների և վաճառականների կոչոււմը ամենացածր:

Լաւ շարժուածքներ և քաղաքավարական ձևեր գիտենալը ճապոն ծառայի անհրաժեշտ յատկութիւններն են: Տանտիրոջ բացակայութեան ժամանակ նա պէտք է հիւրին ընդունէ և զբաղեցնէ. որոշ յարգանքներ մատուցանելուց յետոյ նա խնդրոււմ է հիւրին նստելու յատակին, կամ աւելի ճիշտն ասած չորքելու և որպէսզի թեթեացնէ այդ ձևով նստելու անսովոր հիւրի զրութիւնը, նա տալիս է մի տափակ բարձ, որ հիւրը դնէ իւր ծնկների տակ: Յետոյ նա առաջարկոււմ է հինգ գաւաթ թէյ և թեթեւ շարժումով ու շնորհալի կերպով չոքոււմ է նորեկի առաջ ու սկսոււմ է քաղաքավարի, բայց մտերմական խօսակցութիւն մինչև տանտիրոջ գալը. բայց տիրոջ գալուց յետոյ էլ նա իրաւունք ունի մնալու սենեակոււմ և մասնակցելու խօսակցութեանը: Այն ընտանիքներու, որտեղ եւրոպական կուլտուրան չէ թափանցել, երեկոները երբ զրտից տան շուրջը ծածկոււմ է փայտէ շիրմաներով և վառոււմ են թղթէ լապտերները, տան բոլոր անդամները հաւաքոււմ են այդ ժամանակ միասին, և ծառաներն էլ սովորաբար գալիս են նոյն սենեակը, նստոււմ են անկիւններից մէկոււմ իրանց ձեռագործն են անոււմ, և նոցա մասնակցութիւնը ընդհանուր խօսակցութեան մէջ ընդունուած կարգ ու կանոնին հակառակ չէ. թէև միևնոյն ժամանակ նոցա վարժոււնքը դէպի իրանց տէրերը չափազանցրած յարգանքի է հասնոււմ:

Ճապոնիայոււմ ծառան առանձին դասակարգ չի կազմոււմ. կարելի է ասել, որ ճապոն բնակիչների կէսը ի ծնէ դատապարտուած է ծառայ լինելու. ամեն մէկ կին, եթէ որ ուրիշ մօտ չի ծառայոււմ, ամենից առաջ նա իւր ծնողների ազախինն է. տան տիրուհին իսկապէս միայն գլխաւոր, մեծ, սպասաւորն է:

Ճապոն ծառաների թիւը մեծ է, իսկ ստացած վարձատրութիւնը շատ չնչին. նոքա ամիսը միայն մի քանի դոլլար են ստանում և դորանով էլ պիտի պահեն իրանց գլուխը, ճապոն ծառան անհրաժեշտ է համարում ունենալ իւր առանձին բնակարանը կնոջ, երեխաների և ծնողների համար:

Զանազան պարտականութիւններին նայելով, ճապոնիայում ծառաները բաժանւում են երկու կարգի. մէկը՝ անձնական, իսկ միւսը խոհանոցի համար. այս վերջիններից չի պահանջւում քաղաքավարի ձևեր գիտնալը և նոքա մեծ մասամբ կոպիտ են. թէև հարուստի տան մէջ գլխաւոր խոհարարը մեծ պատիւ է վայելում:

Ներսի ծառաները դէպի իրանց տէրերը զարմանալի խոնարհ են, որը կարող է նոյն իսկ ծիծաղելի երևալ օտարին. իսկ տէրերը նոցա հետ հրամայական եղանակով են խօսում, բայց այդ նոյն ծառան ամեն օտար մարդուց պահանջում է, որ յարգանքով վերաբերուի դէպի ինքը և ստիպում է որ «պարոնի» տիտղոսը տրուի իրան: Այն հանգամանքը, որ ճապոնիայում բոլոր կանայք աղախնի գործ են կատարում, արգելք է դառնում ծառաներին որոշ դասակարգ համարել և հասարակութեան աչքում բարձրանում է այդ արհեստը:

Հիւրանոցներում եւրոպացիների համար ծառաները մեծ մասամբ կանայք են և բոլորն էլ տղամարդի անուն են կրում: Եւ որովհետև բարոյականութիւն ըստ եւրոպայի ճապոնիայում չկայ, այդ պատճառով շատ հեշտ է կին ծառայ պահելը. երբ ճամբորդը հիւրանոց է իջնում, սենեկապետը նորան իսկոյն առնում է իւր հովանաւորութեան տակ և եթէ հիւրը մենակ է, նորա առաջին հարցն այս է լինում՝ «չէք կամենում ամուսին-աղախին ունենալ»:

Եւ քանի որ ճապոնական օրէնքը թոյլ է տալիս ակահարզան ստանալ, երբ մարդ կամենայ, այդ պատճառով ամուսին օտարականներն անհասարակ հակուած են լինում դէպի այդ տեսակ ամուսնութիւնը, որն իսկապէս ամենայաւ միջոցն է ճապոնիայում թէ արժան և թէ յարմար կերպով ապրելու: Կինը կատարում է նորեկի համար թէ տանտիկնոջ, թէ խոհարարի և թէ աղախնի պարտականութիւնները, մնում է միայն, որ հիւրն ընտրէ իւր ճաշակին յարմար մի աղջիկ. դորա համար էլ բաւական է, որ նա այդ մասին յայտնէ սենեկապետին և նա շատ շուտով մեծ ընտրութիւն կարող է ունենալ. գործն առհասարակ սարքւում է աղջկայ հօր և նորեկի հաւատարմատարի, սենեկապետի, միջոցով:

Հիւրանոցների և ճաշարանների աղախինները կոչուում են «մուսմէ» և հագնուում են պայծառ գոյնի շորեր. ճապոն աղախինն այնքան միամիտ ու պարզսիրտ է, որ մարդ նորա ներկայութիւնից չի քաշուում ամենեկին: Ճապոնիայում այս սովորութիւնն էլ կայ, որ աղախինը տղամարդու լողացած ժամանակ ներս է մտնուում նորան օգնելու համար, ինչպէս և տղամարդ ծառան իրաւունք է համարուում մտնել այն սենեակը, որտեղ դեռ անկողնի մէջ պարկած է տիկինը, և այդ այնքան բնական է համարուում որ եւրոպացի հիւրերն էլ ակամայից ընտելանուում են այդ բանին:

Ճապոն ծառայի լաւ յատկութիւններից մէկն էլ այն է, որ նա չիմանալով ոչ մի օտար լեզու, աշխատուում է եւրոպացու ճաշալին ու սովորութիւնները ուսումնասիրել և միշտ էլ առաջարկուում է նորան ակորթելի կերակուրներ: Հիւրանոցներում սենեակի տղամարդ ծառաները միւս ծառաներից զանազանուում են իրանց կրթութեամբ և յաճախ անգլիերէն լեզուն հիմնովին գիտեն: Ուղիղ է, որ նա կարող է դերձակին ներս տանել մի տիկնոջ մօտ, որը դեռ անկողնի մէջ է, բայց մի և նոյն ժամանակ այդ նոյն ծառան ամեն տեսակ գործ կատարելու շնորհէն ունի: Նորան համարձակ կարելի է վստահել և տալ փչացած ժամացոյցը նորոգելու, փախած դեղձանիկին իրան բունը գրաւելու, պայուսակի կտորուած կողպէքը շինելու, կամ հագուստը կարկատելու, կոճակը կարելու և այլն և այլն. ու այդ ամենը նա անուում է մեծ սիրով և միատեսակ ճարպիկութեամբ: Նա ստիպուում է, որ նորեկ հիւրը ցոյց տայ իւր առած իրերը և մի և նոյն ժամանակ հասկացնուում է թէ որ բանին թանգ է վճարել և ինչքան աւելի է տուել:

Բայց հիւրանոցներում ապրելով, ճապոն ծառայի միայն ծիծաղելի կողմերը կարելի է տեսնել. իսկ նորա տաքսիրտ զգացմունքներին ու յատկութիւններին կարելի է ծանօթանալ միայն մասնաւոր տներում, որտեղ ծառաները միջնադարեան մանկլաւիկների նման շատ անգամ ծագումով հաւասար են իրանց տէրերին: Այն տեսակները յաճախ պատահուում են յայտնի գիտնականների և բանաստեղծների մօտ, որոնք մրտնուում են ծառայի պաշտօնով, որպէսզի օգտուեն իրանց տէրերի իմաստութեան փշրանքներով, որ դուրս է գալիս նոցա բերանից: Ասուում են որ Մարկիզ Իտօն, Ճապոնիայի ամենամեծ մարդը, Անգլո-Ճապոնական դաշնագիրը կազմելու համար Անգլիա գնալով, զարմանալի օրինակ է տուել իւր հայրենա-

կիցներին. նա արևմտեան երկրներից մէկում ծառայի պաշտօն է ընդունել այն նպատակով, որ ուսումնասիրէ թէ անգլիական լեզուն և թէ եւրոպական ժողովրդի սովորութիւններն և նիստ ու կացը, որպէսզի յետոյ օգնէ իւր սիրելի հայրենիք Ճապոնիային քաղաքակրթուած երկրների մէջ պատուաւոր տեղ բռնելու:

Ճապոն ծառային ծանօթ չէ իւր և տիրոջ մէջ գոյութիւն ունեցող հաւասարութեան գաղափարը, ինչպէս որ այդ հասկանում են ղէմօկրատները: Նա իրան համարում է իւր տիրոջ դայեակը, դէպի որը պէտք է յարգանքով և մեծ հոգատարութեամբ վերաբերուի: Ճապոն ծառան, ծառայելով օտար երկրացուն և նորան համարելով անգործնական ու իւր օգուտը չհասկացող մարդ, վերաբերում է դէպի նա մի առանձին տեսակ քնքոյշ խնամքով. այդ պատճառով զուր կըլինի նորան պատուէրներ տալը, որովհետև մի և նոյն է, նա իւր ուղածը կանէ, ինչպէս որ ինքը յարմար դատէ տիրոջ օգտի համար: Միաս Բէկօն իւր «Կինը Ճապոնիայում» գրքի մէջ Ճապոնիայում ապրող ամերիկուհիների մասին մի ճշմարիտ նկատողութիւն է անում թէ «Նոքա, որ ամբողջ օրերով անգործ նստած ու յենուած բազմոցներին, միայն անուշեղէն են վայելում, Ճապոն ծառաներին համարում են իբրև մի անգնահատելի գանձ. այն ինչ հմուտ տանտիկիները, որոնք ծառաների վերայ միշտ հսկողութիւն են ունեցել, համարում են նոցա յիմար և յամառ»:

Ճապոն ծառան երբէք չի անի այն, ինչ որ հրամայեն, որովհետև նա իւր երկրացիների աչքում իրան գործը, պարտքը ճանաչող մարդու համբաւ ունի, ուրեմն աւելորդ է համարում պատուէրներ ստանալը. և ծոյլ տանտիկիին իրաւունք ունի ծառային յանձնելու ու հաւատալու ամեն գործ, քանի որ նուիրուած լինելը հնազանդութիւնից աւելի լաւ է: Ճապոն ծառան լաւ տիրոջը կընուիրէ ոչ միայն իւր հաւատարմութիւնը, այլ և զգացմունքը: Նա երբէք չի աշխատում շուտով ազատուել գործից, որ ժամանակ ունենայ զբօսնելու կամ զուարճանալու և երբէք նա իւր գործի վերայ չի նայում ինչպէս մի ատելի և ձանձրալի բանի վերայ. ընդհակառակը նա իւր վիճակը աւելի բարձր է համարում հողագործից, վաճառականից և արհեստաւորից: Նոյնը կարելի է ասել և աղախիներին մասին. նոքա բոլորն էլ ոչ թէ միայն վարձուած մարդիկ են, այլ և ընկերներ, տան բարեկամներ: Երբ ծառաները գնում են թատրոն կամ զբօսանքի իրանց տէրերին

ծառայելու, նոքա մի և նոյն ժամանակ նոցա հետ միասին հաւասար կերպով վայելում են տեղի ունեցող զուարճութիւնները: Երբ որ և է տիկին հիւր զնալիս հետը աղախին է տանում, այս վերջինս նորա հետ մտնում է սենեակ, ծիծաղում է, եթէ ուրախ բան է պատմում և խօսակցութեանն էլ մասնակցում է:

Բայց ճապոն ծառաները մի շատ տգեղ էլ սովորութիւն ունին. թէ որ մի հիւր մասնաւոր տան մէջ եղած ժամանակ ծառային որ և է բան ընծայէ, նա այդ ընծան կապում է պարանին և նաշխած թղթէ օձը կպցնելով նորա վերայ, տանում է իւր տիրուհու մօտ և նորան շնորհակալութիւն է յայտնում ստացած նուէրի համար. ու այնտեղ ընդունուած քաղաքավարութեան համեմատ աղախինը կամ ծառան պարտաւոր է փոխադարձը շնորհակալութեամբ հատուցանել, և ընթերցող, երևակայի՞ր նուիրողի դրութիւնը, եթէ իր տուած պարգևը դրամ չէ եղել, այլ որ և է հին շոր, և յանկարծ ծառան նորան փոխադարձ նուէր տայ մաշուած սպիտակեղէն:

ՏԻՐ. ԿՈՍՍԱՆԵԱՆ